ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի առաջատար խորհրդատուն՝

- Իրականացնում է վարչական, քաղաքացիական, քրեական գործերով Ծառայության շահերի, կատարողական վարույթով հարկադիր կատարողի շահերի ներկայացումը,
- Իրականացնում է Ծառայության տարածքային ստորաբաժանումներին առնչվող վարչական, քաղաքացիական դատական գործերով ՀՀ վերաքննիչ, վճռաբեկ բողոքների նախագծերի կազմումը և նույն դատարաններում Ծառայության շահերի ներկայացումը, ինչպես նաև Ծառայության մասնակցությամբ քաղաքացիական և վարչական գործերով կայացված դատական ակտերի հարկադիր կատարման փուլում ներկայացուցչությունը՝ համապատասխան լիազորագրի հիման վրա,
- Մասնակցում է դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում և իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավական ակտերի փոփոխություններ, լրացումներ կատարելու վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացմանը, ինչպես նաև այլ պետական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական եզրակացությունների նախագծերի նախապատրաստմանը,
- Մասնակցում է կատարողական վարույթների շրջանակներում անձանց գործողություններին քրեաիրավական գնահատական տալու առնչությամբ Գլխավոր հարկադիր կատարողի կողմից քրեական հետապնդման մարմիններին ուղղված հաղորդումների և նյութերի նախագծերի նախապատրաստմանը,
- Իրականացնում է ըստ հանձնարարության՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Ծառայությանն ուղղված գրությունների պատասխան-գրությունների նախապատրաստումը,
- Իրականացնում է Ծառայության ստորաբաժանումներին և հարկադիր կատարողներին իրավաբանական խորհրդատվության տրամադրում:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարման ծառայության իրավաբանական բաժնի առաջատար խորհրդատուի պաշտոնն զբաղեցվում է առանց աշխատանքային ստաժի և փորձի:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: